

ԳԼՈՒԽ ԻՉ

Գրիգոր տխուր էր՝ վասնզի մարդուս կեանքին մէջ վիճակի անորոշութիւնը հիւանդութիւն մ'է, մանաւանդ երիտասարդութեան մէջ երկայն են օրերը որ կանցնին, եւ ժամանակը երբ կը թռչի՝ կը սլանայ մէկ կողմէն, միւսէն կըսէ երիտասարդին՝ «Սպասէ, յուսա, քեզի էլ կ'ուզայ յաջողութեան կարգը, քու բոյնդ էլ կը շինուի, կ'ուզայ ատեն, որ երազներդ իրագործուին»: Եւ նա կը յուսա, կերագէ, երջանկութեան դրախտներու մէջ կանցնէ ծանր երեւակայութեամբ, առասպելներ կը շինէ, եւ նոյն միջոցին նիւթական աշխարհիքս մէջ կը կռուի տաժանելի պատերազմը, կը ջանայ կործանել արգելքները, որ պարագայներն իրեն դէմ կը ստեղծեն, յաջողութիւնք եւ ձախողութիւնք իրարու կը յաջորդեն, կեանքն էլ կ'անցնի, մինչդէռ երիտասարդութեան գարունն էլ կ'անցնի շատերուն համար, գարուն, որոյ շատ անգամ ծաղկունք ջարդուած կարկտի հարուածէ, խամրեալ կիզիչ արեւէ, ամալի պարտեզի տխուր կերպարանին կը ցցնեն: Բարեբախտութիւն մ'է նաեւ երբ երիտասարդութիւնը ունի անուն մը, ունի ժառանգութիւն մը, ունի պաշտպան մը, ունի հայրենիք մը, ունի կին մը, որ զինք կը սիրէ. կենաց դժուարութիւնք այն ատեն կը դիւրանան անոնց համար, որ իրեն բախտեն աւելի մեծ սիրտ մը կը զգան հինքեանս, որ ուժով կը բարբախէք Գրիգոր մեծ անուն մ'ունէր, բայց իւր հօրեղբայրը զայն իրեն կը զլանար, ժառանգութիւն ունէր, որ իւր ազգականք գրեթէ յափշտակէր էին, պաշտպան մ'ունէր, որ գրեթէ երկու տարի կը կորուսէր էր եւ կենաց նշան չէր տար,— կին մը՝ դեռահաս աղջիկ մը կար, որ զինք կը սիրէր, ահա հոն էր իւր միմիայն մխիթարութիւնը: Բայց այդ սերը նաեւ ունէր արգելքներ, եւ ինք քաջ թշնամեաց առջեւ չէր զգար քաջութիւն համարձակիլ զուրցելու կնոջ մը՝ նորա մօրը, թէ «այդ աղջիկը կը սիրեմ, գա իմս է»: Եթէ իւր պաշտպանը՝ Սուրեն հոն լինէր... Բայց ուր էր Սուրեն որ կովի մը, գինուց շկահմանց մէջ կորսուէր ձայն չէր տար: Եթէ ողջ է՝ ինչպէ՞ս մոռացեր էր իւր սիրելի քեռորդին: Մեռա՞ծ կամ դարձեալ գերութեան էր մատնուած: Բայց այդ մարդը յաջողակ, յանդուգն, որ դժուարութիւն մը չէր արգիլէր, այդ մարդը չէր կրնար մեռնիլ.— Գրիգորի համոզմունքն այդ էր:

Մենք Սուրեն թողինք իւր փրփրերախ երիվարին վրայ, որ կը դիմէր սրընթաց Ամանոսի լեռը, արաբացի հալածիչ գունդը ետեւին, որու ձեռքէն ազատիլն յայտնի էր իրեն՝ երբ անգամ մը փոքրիկ միջոց թողուց իւր եւ նոցայ մէջ: Բայց միշտ այն կը խորհէր թէ այս իրարու յաջորդող խումբերը միթէ՞ մեծ գունդի մը յառաջապահք չէին: Այս մտածութեամբ ահա ձիուն զօրութիւնը կը խնայէր եւ կը փափագէր, թէ ինչ որ պիտի գայ թող գայ, որպէսզի այս տարտամ վիճակէն